Social Security

Սոցիալական ապահովության

www.ssa.gov

# Հանգստի անցնողների և վերապրողների նպաստներ

Միացյալ Նահանգների գրեթե ամեն մի բնակիչ շփվում է Սոցիալական ապահովության համակարգի *(Social Security system)* հետ՝ կա՛մ աշխատելով ու Սոցիալական ապահովության տուրք վճարելով, կա՛մ Սոցիալական ապահովության նպաստներ ստանալով: Այդ նպաստները վճարվում են աշխատողին և իր ընտանիքին երբ աշխատողը հանգստի (կենսաթոշակի) է անցնում կամ դառնում է հաշմանդամ: Վերապրողների նպաստը կարող է վճարվել ընտանիքի անդամներին երբ աշխատողը մահանում է: Այս թերթիկը հանգստի անցնողների և վերապրողների նպաստների վերաբերյալ է: Հաշմանդամներին տրամադրելի նպաստների մասին տեղեկություն կարող եք ստանալ *Հաշմանդամության Նպաստներ (Disability Benefits)* թերթիկից:

65 տարեկան կամ ավելի տարիքավոր, կամ կույր, կամ հաշմանդամ մարդիկ կարող են Հավելյալ ապահովության եկամուտ *(Supplemental Social Security - SSI)* ստանալու իրավունքն ունենալ: SSIը վճարումներ է կատարում նրանց, ովքեր ունեն քիչ եկամուտ և ունկվածք կամ բոլորովին չունեն: SSIի մասին տեղեկություններ ստանալու համար կարող եք Սոցիալական ապահովության վարչությունից պահանջել *Հավելյալ Ապահովության Եկամտի Նպաստներ (Supplemental Security Income Benefits)* թերթիկը:

## Ձեր աշխատանքային տարիները

Սոցիալական ապահովության նպաստ վաստակելու համար Միացյալ Նահանգների քաղաքացի լինելը պարտադիր չէ: Եթե աշխատելու օրինական իրավունք ունեք, կարող եք աշխատել Սոցիալական ապահովության համակարգին պատկանող աշխատատեղերում: Աշխատելով դուք վաստակում եք նաև հանգստի անցնողների առողջապահական ապահովագրության *(Medicare)* մասնակցության ցենզ:

Ձեր աշխատանքային տարիների ընթացքում, ձեր աշխատավարձի համեմատ ձեզանից Սոցիալական ապահովության տուրք է գանձվում: Ձեր գործատերը նույնպես տուրք է վճարում ձեր օգտին: Եթե անձնական աշխատանքի տեր եք, դուք վճարում եք և՛ աշխատողի և՛ գործատիրոջ տուրքի բաժինները:

Սոցիալական ապահովության վարչությունը պահպանում է ձեր աշխատավարձերի հաշիվը, օգտագործելով ձեր Սոցիալական ապահովության համարը *(Social Security number)*: Եթե նույնիսկ փոխում եք ձեր աշխատանքը, դուք գործածում եք նույն Սոցիալական ապահովության համարը. այսպիսով ձեզ է վերագրվում տարիների ընթացքին ձեր վաստակած ամբողջ աշխատավարձը:

Քանի որ ձեր նպաստի չափը հիմնված է աշխատանքային տարիների ընթացքում ձեր վաստակածի վրա, կարևոր է, որ դուք միշտ օգտագործեք նույն Սոցիալական ապահովության համարը և ապահովեք, որ ձեր գործատերը ձեր աշխատավարձից Սոցիալական ապահովության տուրքեր հանեն:

Ստուգելու համար, որ ձեր աշխատավարձի արձանագրությունը ճշգրիտ է, դուք կարող եք պահանջել *Սոցիալական ապահովության հաշվետվությունը (Social Security Statement)*: Հաշվետվությունը ստանալու համար անհրաժեշտ դիմումնագիրը ստանալու համար, կարող եք հեռախոսել Սոցիալական ապահովության վարչության անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Այս հաշվետվությունը նաև մոտաւոր գնահատում կտա ձեր վաստակած հանգստի անցնելու, հաշմանդամության և վերապրողների նպաստի գումարի վերաբերյալ:

## Հանգստի անցնելու նպաստ

Հանգստի անցնելու նպաստ (կենսաթոշակ) ստանալու համար ընդհանրապես պետք է առնվազն 10 տարի աշխատած ու Սոցիալական ապահովության տուրք վճարած լինել: Եթե ծնվել եք մինչև 1929 թվականը, նվազագույն վաստակը 10 տարուց քիչ է: Ձեր հանգստի կոչվելու նպաստի գումարը հիմնված է Սոցիալական ապահովության համակարգում արձանագրված ձեր լրիվ աշխատավարձերի վրա: Որքան բարձր են եղել ձեր աշխատավարձերը, այնքան բարձր կլինի ձեր նպաստի գումարը:

Սոցիալական ապահովության հանգստյան կոչվելու նպաստ կարող են ստանալ 62 տարեկան անհատներ: Բայց 62 տարեկանից նպաստ ստանալու դեպքում, նպաստի գումարը ավելի քիչ կլինի քան եթե ավելի բարձր տարիքից սկսեիք նպաստ ստանալ: Եթե ծնվել եք մինչև 1938 թվականը, կարող եք առավելագույն գումարը ստանալ 65 տարեկանից թոշակի անցնելու պարագային: Իսկ 1938 թվականին կամ ավելի ուշ ծնվածների համար առավելագույն գումարը ստանալու տարիքը աստիճանաբար բարձրանում է մինչև 67 տարեկան:

Ձեր ընտանիքի որոշ անդամներ կարող են Սոցիալական ապահովության նպաստ ստանալ ձեր արձանագրված աշխատավարձերի հիման վրա: Ձեր ամուսինը (մարդը կամ կինը) կարող է 62 տարեկանից նպաստ ստանալ (կամ ավելի վաղ, եթե նա խնամում է ձեր զավակին, երբ վերջինս նպաստ է ստանում ձեր աշխատա–վարձի հիման վրա): Ձեր նախկին ամուսինը կարող է նպաստ ստանալ եթե ամուսնացած եք եղել առնվազն 10 տարի: Ձեր զավակները կարող են նպաստ ստանալ մինչև 18 տարեկան. իսկ եթե դպրոց են հաճախում՝ մինչև 19 տարեկան: Տասնըութից բարձր տարիքի զավակը կարող է ձեր աշխատավարձի հիման վրա նպաստ ստանալ եթե հաշմանդամ է:

## Վերապրողների նպաստ

Երբ աշխատողը մահանում է, հնարավոր է որ ընտանիքի անդամները կարողանան ստանալ Սոցիալական ապահովության ամսական նպաստ: Այդ նպաստը ստանալու համար աշխատած տարիների պահանջված քանակը կախված է մահացածի տարիքից: Երիտասարդի մահվան դեպքում, դա կարող է մեկուկես տարի լինել: Իսկ ավելի բարձր տարիքում մահվան դեպքում, աշխատած տարիների պահանջված քանակը կարող է հասնել մինչև 10 տարու:

Այրին (տղամարդ կամ կին) կարող է նպաստ ստանալ 60 տարեկանից (կամ դրանից շուտ եթե նա խնամում է ձեր զավակին, որը նպաստ է ստանում ձեր աշխատավարձի հիման վրա): Հաշմանդամ այրին կարող է նպաստ ստանալ 50 տարեկան հասակից: Ամուսանալուծված այրին ևս կարող է նպաստ ստանալու պայմանները լրացնել:

Ձեր զավակները կարող են նպաստ ստանալ մինչև 18 տարեկան, կամ եթե դպրոց են հաճախում՝ մինչև 19 տարեկան: Տասնըութը տարեկանից վեր զավակները կարող են նպաստ ստանալ եթե հաշմանդամ են:

## Medicare

Medicareը առողջապահական ապահովագրություն է նրանց համար, ովքեր 65 տարեկան են. իսկ 65ից ցածր տարիքի դեպքում՝ հաշմանդամ են, կամ իրենց երիկամները չեն աշխատում: Եթե 65 տարեկանում արդեն Սոցիալական ապահովության նպաստ եք ստանում, ինքն ըստ ինքյան կսկսեք ունենալ նաև Medicareը: Եթե ոչ, ապա 65 տարեկանը լրացնելուց երկու կամ երեք ամիս առաջ դիմեցեք Սոցիալական ապահովության վարչությանը, անհրաժեշտ կարգադրությունները անելու համար:

## Երբ և ինչպես դիմել

Նպաստի համար կարելի է դիմել Սոցիալական ապահովության ցանկացած գրասենյակը: Ամենահեշտ ձևը՝ **1–800–772–1213** անվճար հեռախոսահամարով կապվելն է: Սոցիալական ապահովության գործի համար **եթե թարգմանչի օգնության կարիքն ունեք,** մենք անվճար կդրամադրենք:

Վերապրողների նպաստի համար դիմեցե՛ք պայմանները լրացնելո՛ւն պես: Հանգստյան անցնելու նպաստ ստանալու համար, լավ կլինի խոսել Սոցիալական ապահովության վարչության ներկայացուցչի հետ հանգստի

անցնելուն նախորդող տարվա ընթացքին. կանոնները բարդ են, և հնարավոր է որ ի օգուտ ձեզ կարողանաք նպաստ ստանալ մինչև աշխատելուց դադարելը:

## Անհրաժեշտ փաստաթղթերը

Հաստատելու համար որ դուք իրավունք ունեք Սոցիալական ապահովության նպաստ ստանալու, և ճշտելու համար ձեր նպաստի գումարը, մենք կարիք կունենանք որոշ փաստաթղթերի: Թե որոնք են անհրաժեշտ փաստաթղթերը՝ կախում ունի ձեր դիմումի պարագաներից: Հետևյալ ցանկի մեջ նշված են որոշ փաստաթղթեր, որոնք հավանաբար ձեզ անհրաժեշտ կլինեն Սոցիալական ապահովության նպաստի դիմելու համար.–

- ձեր Սոցիալական ապահովության քարտը (կամ համարը)
- ձեր ծննդյան վկայականը
- ձեր զավակների ծննդյան վկայականները (եթե նրանք էլ են դիմում)
- Միացյալ Նահանգների քաղաքացի կամ օրինական բնակիչ լինելու ապացույց եթե դուք (կամ ձեր դիմող զավակը) չեք ծնվել Միացյալ Նահանգներում
- ձեր ամուսնու (մարդ կամ կին) ծննդյան վկայականը և Սոցիալական ապահովության համարը, եթե նա դիմում է ձեր աշխատավարձի հաշվի հիման վրա
- ամուսնության վկայական (եթե դիմում եք ամուսնի աշխատավարձի հիման վրա)
- զինվորական ծառայության ավարտման վկայականը, եթե զինվորական ծառայություն եք մատուցանել
- ձեր գործատիրոջից ստացած ամենավերջին W-2 թերթիկը կամ (եթե անձնական աշխատանք եք ունեցել) տուրքերի վերաբերյալ ձեր վերջին զեկույցը

Այս ցանկը ամբողջական չի: Երբ դիմեք, մենք ձեզ կասենք եթե ուրիշ փաստաթղթի կարիքը լինի:

**Նկատի ունեցեք այս կարևոր հանգամանքը.–** Մենք պետք է տեսնենք բուն փաստաթղթերը կամ փաստաթղթերը տվող գրասենյակի կողմից հաստատված կրկնօրինակները: Դուք կարող եք բերել կամ փոստով ուղարկել մեզ: Մենք կհանենք կրկնօրինակը և իսկականը կվերադարձնենք ձեզ: Եթե դուք չունեք որոշ անհրաժեշտ թղթեր, մի՛ ուշացրեք ձեր դիմումը. մենք ձեզ կօգնենք, որպեսզի անհրաժեշտ թղթերը ստանաք:

## Հավելյալ տեղեկություններ

Դիմեք ***www.ssa.gov*** կայքին. դուք այնտեղ կգտնեք ձեր հարցումներից շատերի պատասխանները ինչպես նաև Սոցիալական ապահովության այլ սպասարկություններ: Կարող եք **հրատարակումներ** և **դիմումնագրեր** պատվիրել, օգտվել **հանգստի անցնելու** և **այլ նպաստների նախատեսման ծրագրերից** *(Retirement Planners և Benefits Planners)*, գրանցվել ստանալու ***eNews*** էլեկտրոնային պարբերաթերթը, և նույնիսկ **դիմել նպաստ ստանալու:** Ինտերնետով մեր սպասարկությունների մեծ մասը միայն անգլերենով է: Դուք կարող եք մեզ հեռախոսել **1–800–772–1213** անվճար համարով: Մենք կարող ենք ձեր հարցումները պատասխանել հեռախոսով առավոտյան ժամը 7ից մինչև երեկոյան ժամը 7ը՝ աշխատանքային օրերի ընթացքում. ընդհանուր հարցերի ձայնագրված պատասխանները կարող եք ստանալ օրական 24 ժամ: Եթե խուլ եք կամ լսելու դժվարություն ունեք, կարող եք հեռախոսել մեր TTY համարով՝ 1-800-325-0778, առավոտյան ժամը 7ից երեկոյան ժամը 7ը՝ աշխատանքի օրերին:

Մենք հեռախոսային բոլոր խոսակցությունները գաղտնի (անձնական) ենք համարում, լինեն դրանք մեր անվճար համարով կամ գրասենյակներում: Նաև ուզում ենք որ դուք ստանաք ստույգ տեղեկություն և քաղաքավարի սպասարկություն: Ահա՛ թե ինչու մեր մի այլ ներկայացուցիչ հետևում է որոշ հեռախոսային խոսակցություններին:

**Social Security Administration**
Retirement and Survivors Benefits (Armenian)
Publication No. 05-10725
January 2002

Տպագրված է վերարտադրված թղթի վրա: